ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝+37491700974,**Էլ. հասցե՝**foi@foi.am, **www.foi.am**

18.09.2023
351-75

Էկոնոմիկայի նախարար
Վահան Քերոբյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Քերոբյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցումներին ի պատասխան 2023 թվականի օգոստոսի 11-ի թիվ 09/15540-2023 և 2023 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 09/17699-2023 գրություններով տրամադրել եք երկակի նշանակության (հսկվող) ապրանքների արտահանման թույլտվությունների, Ռուսաստանի Դաշնություն նույն ապրանքների արտահանման թույլտվությունների և մերժումների վերաբերյալ տեղեկություններ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք հայտնել

1. Արդյո՞ք Էկոնոմիկայի նախարարության՝ վերևում նշված գրություններում ներկայացված թույլտվությունների և մերժումների թվերը ներառում են «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող զգայուն ապրանքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝ 2023 թվականի մայիսի 25-ի N 808-Ն որոշմամբ սահմանված զգայուն ապրանքների արտահանման թույլտվությունները և մերժումները:
2. Եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել, թե ՀՀ կառավարության նշված որոշման ուժի մեջ մտնելուց մինչ օրս զգայուն ապրանքների արտահանման քանի՞ մեկանգամյա, քանի՞ անհատական և քանի՞ ընդհանուր թույլտվություն է տրամադրվել:
3. Զգայուն ապրանքների արտահանման թույլտվություններից քանի՞ մեկանգամյա, քանի՞ անհատական և քանի՞ ընդհանուր թույլտվություն է տրամադրվել Ռուսաստանի Դաշնություն զգայուն ապրանքների արտահանման համար:
4. Քանի՞ դեպքում է մերժվել զգայուն ապրանքների արտահանման թույլտվության տրամադրումը:
5. Զգայուն ապրանքների արտահանման մերժումներից քանի՞սն են վերաբերել Ռուսաստանի Դաշնություն զգայուն ապրանքների արտահանմանը:
6. Ռուսաստանի Դաշնություն զգայուն ապրանքների արտահանման մերժումներից քանի՞սն են եղել արտահանման և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ապահովման նպատակի միջև հասությունների առկայության հիմքով, ո՞ր միջազգային փաստաթղթով ստանձնած և ի՞նչ միջազգային պարտավորությունների կատարման

ապահովման նպատակին հակասության հիմքով է եղել մերժումներից յուրաքանչյուրը:

7. ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման ուժի մեջ մտնելուց մինչ օրս ՀՀ տարածքով զգայուն ապրանքների տարանցիկ փոխադրման քանի՞ ծանուցում է ստացվել, դրանցից քանի՞սն են վերաբերել զգայուն ապրանքների՝ ՌԴ փոխադրմանը, քանի՞ դեպքում է արգելվել զգայուն ապրանքների տարանցիկ փոխադրումը, արգելքներից քանի՞սն է վերաբերել զգայուն ապրանքների՝ ՌԴ փոխադրմանը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան